ԹԵՄԱ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՅԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 55. ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄ

1

Պետությունը հովանավորում և խրախուսում էր ներքին ու արտաքին առևտուրը, նպաստում ոչխարաբուծության զարգացմանը և «ցանկապատումների» տարածմանը, թափառաշրջիկ դարձած գյուղացիներին «աշխատանքային տներում» բռնի անվճար աշխատեցնելուն: Պառլամենտը, որի կազմի հիմնական մասը նոր ազնվականության և բուրժուազիայի ներկայացուցիչներն էին, հաստատում էր արքայական գրեթե բոլոր որոշումները:

Հենրիխ VIII-ի անցկացրած ռեֆորմացիայի արդյունքում անգլիական եկեղեցու գլխավորը դարձավ թագավորը, պետությանն անցավ եկեղեցական եկամուտների զգալի մասը: Անգլիայում փակվեցին կաթոլիկ վանքերն ու մենաստանները, նրանց հողերն ու ունեցվածքը բռնագրավվեցին հօգուտ պետության: Հետագայում վանքապատկան հողերի և շինությունների մեծ մասը պետությունը վաճառեց ձեռներեցներին, որոնք այդտեղ մանուֆակտուրաներ կազմակերպեցին:

2

Թագուհին թաքուն հովանավորում էր անգլիացի ծովահեններին, որոնք թալանում էին Ամերիկայից հարստություններ տեղափոխող իսպանական նավերը և ստանում էր նրանց զավթած ավարի մի մասը: Իր թագը նա զարդարեց մի ադամանդով, որը նվեր էր ստացել կողոպտված գանձերից:

Առավել հաջողակ ծովահենները ստանում էին թագավորական ծովակալի կոչում: Դրանցից մեկն էլ ծովահեն ***Ֆրենսիս Դրեյկն*** էր: Նա իր ոչ մեծ նավատորմով շրջանցեց Հարավային Ամերիկան և թալանեց ծովափնյա իսպանական գաղութները, որոնց նավահանգիստներում հավաքել էին Իսպանիա ուղարկելիք ոսկին: Այնուհետև կտրեց-անցավ Խաղաղ և Հնդկական օվկիանոսները՝ կատարելով Մագելանից հետո երկրորդ շուրջերկրյա ճանապարհորդությունը: Դրեյկը մեծ ավարով վերադարձավ Անգլիա: Էլիզաբեթ թագուհին անձամբ այցելեց Դրեյկի նավը և ծովահենին շնորհեց ասպետական կոչում:

3

Թե՛ Ամերիկայում նոր գաղութների նվաճումը, թե՛ Եվրոպայում մղվող մշտական պատերազմները ստիպում էին Իսպանիայի տիրակալներին հենվել հիմնականում ազնվականների վրա: ***Իսպանական ազնվականությունը***, որը երբևէ տնտեսական գործունեությամբ չէր էլ զբաղվել, ***դարձավ աբսոլյուտիզմի միակ հենարանը երկրում***, և իր ապրուստը հոգում էր կամ նորահայտ գաղութների հարստությունները թալանելով, կամ էլ արքայական բանակում պատերազմներին մասնակցելով: Գաղութներից բերվող անաշխատ ոսկին ու արծաթը արքային թույլ էին տալիս հաշվի չառնել ձևավորվող բուրժուազիայի շահերը: Բանակի սպառազինման հետ կապված բոլոր միջոցները ոչ թե արտադրվում էին Իսպանիայում, այլ գնվում էին հարևան երկրներից: Նման քաղաքականության հետևանքով Իսպանիայում փակվում էին մանուֆակտուրաները, ***տնտեսությունը զրկվում էր զարգացման խթաններից ու դրամական ներդրումներից և ապրիճանաբար հետադիմում էր:***

4

Ֆիլիպ II-ը Նիդերլանդներում ինկվիզիցիա մտցրեց, սկսեց դաժանորեն հետապնդել բողոքականներին, ինչը հանգեցրեց մարդկային մեծ զոհերի և ֆինանսական կորուստների: Ի վերջո դա հանգեցրեց Նիդերլանդներում հեղափոխության հաղթանակին և վերջ դրեց երկրում Իսպանիայի տիրապետությանը: Հսկայական գումարներ ծախսվեցին 1588 թ. ***«Անպարտելի armադայի»*** հանդերձավորման վրա: 134 նավերից կազմված այդ նավախումբը պետք է իսպանական բանակը ափ հաներ Անգլիայում՝ այնտեղ կաթոլիկությունը վերականգնելու համար: Սակայն անգլիական նավատորմը կարողացավ խորտակել իսպանական նավերի մեծ մասը և կանխել զորքերի ափհանումը: Նավատորմի ոչնչացումը անպաշտպան թողեց Իսպանիայի ափերը, ինչի հետևանքով անգլիացի ծովահենները սկսեցին անարգել թալանել Իսպանիայի ծովափնյա քաղաքները: Ֆիլիպ II-ը ստիպված էր պետական սնանկություն հայտարարել՝ հրաժարվել պետության ներքին ու արտաքին պարտքերը վճարելուց: Իսպանիայի վարկանիշը խիստ ընկավ:

Կրոնական մոլեռանդությունից դրդված Ֆիլիպ II-ը կարգադրեց Իսպանիայից վտարել բոլոր ***հրեաներին և մորիսկներին՝*** կաթոլիկություն ընդունած մահմեդականներին: Դրանք մեծ մասամբ գործարար մարդիկ էին, հմուտ արհեստավորներ: Նրանց վտարումով երկրի տնտեսությունը մեծ վնասներ կրեց, փակվեցին մանուֆակտուրաները, վերացան ավանդական արհեստներից շատերը:

Պետության եկամուտները ավելացնելու համար Ֆիլիպ II-ը ստիպված էր բարձր հարկեր սահմանել արտադրության, արհեստների առևտրի և գյուղատնտեսության վրա: Որևէ գործունեությամբ զբաղվելը դարձավ ոչ եկամտաբեր, Իսպանիան սկսեց վերածվել անգործների, ծույլերի ու անբանների երկրի:

5

Եռանդուն, խելացի և պատվախնդիր Ռիշելյեն փաստացի կառավարեց Ֆրանսիան 1624 թ. մինչև իր մահը՝ 1642 թ.: Այդ ընթացքում Գլխավոր շտաբներն ընդհանրապես չհրավիրվեցին: Ռիշելյեն վճռականորեն պատժում էր արքայական հրամանները չկատարողներին: Անհնազանդ որոշ ավատատերերի դղյակները քարուքանդ արվեցին:

Բանտարկության սպառնալիքով Ռիշելյեն արգելեց մենամարտերը ազնվականների միջև: Ազնվականը անգամ իրեն նետված ծուռ հայացքը համարում էր վիրավորանք, որը կարելի է մաքրել միայն վիրավորողի արյունով: Ամեն տարի մենամարտերը գերեզման էին տանում հարյուրավոր ազնվականների: Ռիշելյեն վերջ դրեց դրան: Նա ասում էր, որ ազնվականները արյուն թափելու իրավունք ունեն միայն թագավորին ծառայելիս: Սակայն դատաստան տեսնելով առանձին ազնվականների հետ՝ Ռիշելյեն գործում էր հանուն ուժեղ ազնվականական պետության:

6

Թագավորը ինքն էր նոր հարկեր սահմանում, պատերազմ սկսում կամ դաշինքներ կնքում: Նա ոչ մեկի առջև հաշվետու չէր, թե ինչի վրա էր ծախսում գանձարանի գումարները: Արքայի վարած պատերազմների արդյունքում Ֆրանսիան հարևան երկրներից զգալի տարածքներ զավթեց:

Անհանգիստ Փարիզից արքունիքն առանձնացավ մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Վերսալի պալատում: Ահռելի գումարներ էին ծախսվում թանկարժեք կահույքի, գորգերի, շքեղ արտահագուստների վրա: Ֆրանսիական արքունիքի փայլն ու ճոխությունն ընդօրինակում էին եվրոպական շատ միապետեր:

Ֆրանսիայում պալատական դարձած ազնվականների «աշխատանքը» սկսվում էր թագավորի արթնացումով. նրանցից մեկը հետ էր քաշում թագավորական մահճակալի վարագույրը և մատուցում էր առավոտյան զգեստը, մյուսը գուլպաներն էր մոտեցնում, երրորդը՝ կոշիկները: Թագավորին զգեստավորում էր մի քանի տասնյակ ազնվական: Նույնպիսի արարողություններով թագավորը սնունդն էր ընդունում կամ քուն մտնում: